ՈՐՈՇՈՒՄ

2011 թվականի ապրիլի 7-ի **Թիվ 624** քաղ. Մոսկվա

Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող, անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում եւ (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների եւ անձանց ռեեստրի ձեւավորման ու վարման կարգի մասին հիմնադրույթի վերաբերյալ

Մաքսային միության հանձնաժողովը **որոշեց**.

Հաստատել «Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող, անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում եւ (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների եւ անձանց ռեեստրի ձեւավորման ու վարման կարգի մասին» հիմնադրույթը (կցվում են):

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ս. Ռումաս	**Ու. Շուկեեւ**	**Ի. Շուվալով**

Հաստատված է

Մաքսային միության

հանձնաժողովի

2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 624

որոշմամբ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող, անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում եւ (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների եւ անձանց ռեեստրի ձեւավորման ու վարման կարգի մասին

1. «Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող, անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում եւ (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների եւ անձանց ռեեստրի ձեւավորման ու վարման կարգի մասին» հիմնադրույթը մշակվել է ԵվրԱզԷՍի Միջպետական խորհրդի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 29 որոշման հիման վրա՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317 որոշմամբ հաստատված՝ «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու եւ ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթի իրագործման նպատակով:

2. Սույն Հիմնադրույթով սահմանվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող, անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում եւ (կամ) պահպանում

իրականացնող կազմակերպությունների եւ անձանց ռեեստրի (այսուհետ՝ Ռեեստր) ձեւավորման ու վարման, ինչպես նաեւ Ռեեստրում առկա տվյալների տրամադրման կարգը:

3. Կողմերի լիազորված մարմինները Ռեեստրում առկա տեղեկություններն ուղարկում են Մաքսային միության հանձնաժողով՝ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրացված տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ Ինտեգրացված տեղեկատվական համակարգ) դրանք տեղադրելու համար:

Ռեեստրը ձեւավորվում է Կողմերի լիազորված մարմինների կողմից՝ ապահովելով Մաքսային միության պաշտոնական կայքից եւ Կողմերի լիազորված մարմինների պաշտոնական կայքերից Ռեեստր մուտք գործելու հնարավորությունը:

Ռեեստր ձեւավորելիս եւ վարելիս պետք է ապահովել Ռեեստրում առկա տեղեկությունների՝ չթույլատրված հասանելիությունից պաշտպանությունը:

4. Ռեեստրը վարվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17–ի թիվ 342 որոշմամբ հաստատված ձեւով:

5. Տվյալները Ռեեստրում մուտքագրվում են Կողմերի լիազորված մարմինների կողմից՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317 որոշմամբ հաստատված՝ «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու եւ ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան ընդունված որոշման հիման վրա: Նման դեպքում Ռեեստրում մուտքագրվում են տեղեկություններ հսկողության օբյեկտի վերաբերյալ:

6. Ռեեստրում առկա տեղեկությունները փոփոխելու, այդ թվում՝ Ռեեստրից դրանք հանելու հիմք է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317 որոշմամբ հաստատված՝ «Անասնաբուժական հսկողության

(վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու եւ ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթով սահմանված կարգով ընդունված որոշումը: Նման դեպքում Ռեեստրում մուտքագրվում են համապատասխան տեղեկություններ:

7. Ռեեստրում տեղեկություններ ներառելու կամ Ռեեստրում առկա տեղեկությունները փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից սկսած 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ Կողմի լիազորված մարմինը համապատասխան տեղեկություններ է ուղարկում Մաքսային միության հանձնաժողով, Կողմերի լիազորված մարմիններ, արտահանող պետության իրավասու մարմին:

8. Շահագրգիռ անձանց պահանջով Ռեեստրում առկա տեղեկությունների վերաբերյալ տվյալների տրամադրումն իրականացնում է Կողմի լիազորված մարմինը։